

## Բնակելի անշարժ գույքի ապահովագրություն

### Անշարժ գույքի ապահովագրության հետ անհոգ եղեք Ձեր կորուստների փոխհատուցման համար

Դուք կարող եք ապահովագրել Ձեր գույքը՝ շուկայական ամբողջ արժեքի կամ դրա մի մասի չափով: Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ կողմից տրամադրված վարկերով ձեռք բերված գույքի դեպքում, ապահովագրական գումարը պետք է առնվազն հավասար լինի վարկի գումարին<sup>1</sup>:

### Ապահովագրվող ռիսկեր

- ✓ Անշարժ գույքի ապահովագրության փաթեթը ներառում է հետևյալ ռիսկերը.
- ✓ Հրդեհ, կայծակ, գազի պայթյուն
- ✓ Ջրի վնաս
- ✓ Երկրաշարժ
- ✓ Կոտորանքով գողություն, կողոպուտ
- ✓ Երրորդ անձանց անօրինական գործողություններ

### Փաթեթը չի ներառում հետևյալ ռիսկերը.

- ✓ Ջրհեղեղ, հողմ, փոթորիկ, մրրիկ, կարկուտ
- ✓ Սողանք, լեռնային/քարային զանգվածների փլուզում

### Սակագինը

- ✓ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ վարկերով ձեռք բերված անշարժ գույքի համար վարկային պայմանագրի գործողության ընթացքում տարեկան ապահովագրության սակագինը կազմում է ապահովագրական գումարի 0.18%-ը

### Կիրառվող չփոխհատուցվող գումարներ

- ✓ Ապահովագրական գումարի 1%, ոչ պակաս քան 100,000 ՀՀ դրամ
- ✓ Երկրաշարժի դեպքում՝ ապահովագրական գումարի 2%

### Անհրաժեշտ փաստաթղթեր

- ✓ Ապահովադրի անձնագրի պատճեն
- ✓ Սեփականատիրոջ անձնագրի պատճեն, եթե սեփականատերը ապահովադիրը չէ
- ✓ Գույքի սեփականության վկայականի պատճեն
- ✓ Գույքի գնահատման հաշվետվության պատճեն (առկայության դեպքում), հակառակ դեպքում հիմք է ընդունվում գույքի շուկայական արժեքը:

### Կարևոր նշում

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հանդիսանում է ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ –ի ապահովագրական գործակալ և ներկայացնում է ապահովագրական ծառայությունը ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ–ի անունից և վերջինիս կողմից սահմանված պայմաններով: Ապահովագրական հատուցում վճարելու պահանջները ենթակա են ներկայացման ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ–ին: «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն որևէ պատասխանատվություն չի կրում ապահովագրական հատուցումների վճարման հետ կապված:



Ապահովագրական ծառայությունների լրացուցիչ պայմաններին ծանոթանալու համար այցելեք [www.ingoarmenia.am](http://www.ingoarmenia.am)

<sup>1</sup> Գույքի արժեքի մի մասի չափով ապահովագրության դեպքում ապահովագրական հատուցումը կվճարվի ապահովագրական գումարի և գույքի ամբողջական շուկայական արժեքի համամասնությամբ:

Թարմացվել է՝ 17/01/2019 15:00